Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7052

Ему мудр в труде.

Экземпляр

9(47-928)
Б-70

1880 г.

2011-09

Հայ Ազգի եւ կրօնի միութեան նուիրումէ հեղինակն.

ՀԱՅ ԱԶԳ ԵՒ ԿՐՕՆ

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐԴԱՆ ՍՊԱՐԵՊԵՏԻ ՄԵՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԴ ՎԱՍԱԿԱՑ ՄԵՐՁՊԱՆԻ ԱԶԳՈՒՐԱՑ ԻՇԽԱՆՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ.

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԳՆՈՒՆԻ ՎԱՆԵՑԻՈՑ.

ՀԱՊՈՒՐԱՆՔ.

ԵԹԷ կամենում ես տկարացնել մի ազգ, նորա մէջ կրօնական բաժանումներ եւ աղանդներ ցանիր. եթէ կամենում ես մի ազգ ջնջել աշխարհի երեսից, նորա կրօնն միացուր մի հզօր, տիրող ազգի կրօնի հետ. եթէ կամենում ես բառնալ մի ազգի լեզուն, ջնջիր նորա դպրութիւնն:

Կրօնն է ազգութեան նեցուկ, ազգութիւնն է վահան կրօնի, կրօն եւ ազգութիւն առնչակիցներ. ոչ ազգութիւն առանց կրօնի, եւ ոչ կրօն առանց ազգութեան:

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼ—1880

47.925
Դ-70

1052

19 AUG 2006

Հայ Ազգի եւ կրօնի միութեան նուիրումէ հեղինակն.

9(47.925)
Գ-70

ՀԱՅ ԱԶԳ ԵՒ ԿՐՕՆ

ԸՆԴՀԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՎԷՐԳԵՆ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՄԱՄԻԿՈՆԵՐՆ ԸՆԴ ՎԱՍԱԿԱՑ ՄԱՐԶՊԵՆԻ ԱԶԳՈՒՐԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵՐՈՑ.

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ
Ս. ԳՆՈՒՆԻ ՎԱՆԵՑԻՈՑ.

Հատոր Առաջին.

38

Եթէ կամենում ես ապրուցնել մի ազգ. նորա մէջ կրօնական բաժանումներ եւ ազանդներ ցանիր. եթէ կամենում ես մի ազգ ջնջել աշխարհի երեսից, նորա կրօնն միացուր մի հզօր տիրող ազգի կրօնի հետ. եթէ կամենում ես բառնալ մի ազգի լեզուն, ջնջիր նորա դպրութիւնն:

Կրօնն է ազգութեան նեցուկ, ազգութիւնն է վառան կրօնի, կրօն եւ ազգութիւն առնչակիցեն. ոչ ազգութիւն առանց կրօնի, եւ ոչ կրօն առանց ազգութեան:

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼ—1880

20.03.2013
18 AUG 2006

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ Տ ԳԷՈՐԳԱՅ Դ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ.

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ,

ՎԱՐԴԱՆ ԵՒ ՎԱՍԱԿ.

Վարդան.

Տէր մարդպան, մեր հայրենիք — դիւցազանց Օրօրան Հայաստան, իւր որդւոց անմիաբանութեամբ խմեց թշուառութեան դառն բաժակը, զրկուեցաւ իւր թագից և գահից, իբրև մի այրի կին, նըստած իւր թափուր առագաստի մէջ, աղի արտասուք է թափում, իւր միակ յոյսն ու մխիթարութիւնը մնացել է մի յոգաւորիչ կապ — կրօնն, որ իբրև մի ամուր հանգոյց միշտ պիտի կապէ իւր զրկի մէջ հայրազուրկ որդւոց, սնուցանել Ս. Աւետարանի մաքուր կաթամբ, մինչ զարգանան Սահակայ և Մեսրոպայ տնկած դրախտի մէջ, յաջորդեն իւրեանց հօրն, սրբեն այրի մօր արտասուքն, բայց . . . .

Վասակ.

Վարդան սպարապետ, ինձ ասացին որ, մեր կրօնականաց և նախարարաց կողմից պատգամաւոր էք ուղարկուել ինձ մօտ. խնդրեմ, պարզ յայտնեցէք ձեր նպատակն առանց ճառախօսութեան կամ ճարտասանական ձևի դիմելոյ։

Վարդան.

Տէր Մարզպան, ես ոչ բարձր ուսումն եմ ստացել օտար հողի վերայ մեր ընտրելագոյն վարդապետաց հետ, և ոչ բնական ձիրք ունիմ ճարտարախօսութեան, որով ցանկանամ ունկնդրաց միտքն գրաւել դէպի ինձ, այլ միայն Հայր Սահակայ սրինքն եմ ծծել հայրենի հողի վերայ, որոյ ցաւերն սրում են լեզուս, որոյ մնտաւոր վտանգն քարոզիչ է անում ինձ, ինչպէս ձեզ մօտ, նոյնպէս և ամեն մի Հայ անհատի մօտ, խնդրել և յորդորել զէպի սուրբ միութիւնն։ Վասն զի Հայաստանի ոխերիմ թշնամի Սասանեան տոհմի Յազկերտ արքայն կամենում է խզել մեր միութեան կապն, և յա-

բաւական սակայն ամբողջ տակ ծածկել Հայաստանի յուսոյ բեւեռական պայծառ աստղն, բառնալով Հայոց Քրիստոնէական Ս. կրօնն, ուղղափառ հաւատն, և կրկին մեր միաքն ու հոգին ազիտութեան և կռապաշտութեան թանձր խաւարով ծածկել։ Տէր մարդպան, եթէ տակաւին մեք չզգաստանամք, չարթնանամք մեր թմրութեան քնից, չմիաբանիմք ազգովին, չլինիմք մի սիրտ և մի հոգի պաշտպանել մեր կրօնն, մեր ազգութեան կապն, հաւատացէք աներկբայ, որ շատ մօտ ապագայում պիտի ձուլուիմք Պարսից հետ իբրև մի ազգ. խոպառ պիտի կորչիմք, և մի միայն մեր ազգի և հայրենեաց անուններն պիտի մնան ապագայ պատմութեանց մէջ, փառաւոր և պայծառ անցեալով, տխուր և սև ներկայով ու ապագայով. ինչպէս ակնյայտնի փորձով տեսնում ենք, ինչ ազգ որ կորցրել ու փոխել է իւր միութեան կապն — կրօնն, կորցրել է նաև իւր ազգութեան գոյութիւնն—լեզուն, գպրութիւն և հայրենիք։ Ուրեմն անհրաժեշտ հարկ է մեզ միանալ մեր հոգևորականաց հետ, ընդդիմանալ Յազկերտի առաջարկութեան և յարձակման, բնաւ չինայելով կրօնի պաշտպանութեան համար ոչ ստացուածք, ոչ փառք, ոչ պատիւ և ոչ իսկ մեր արեան վերջին կաթիլներն։

Վասակ.

Վարդան սպարապետ, մեծին Սահակայ արենակցութիւնդ և երկարամեայ նորա աշակերտութիւնդ, արդարև քեզ ուսուցել է երկարաբան ճառախօսութիւն, մինչև անգամ չնչին առարկայի վերայ։ Աշխատում ես ճարտար բառերով համոզել այլոց դէպ ի քո նպատակդ, բայց այդ ձև վարդապետութիւնդ այժմ յարգ չունի. իսկ զինուորական եռանդդ ուսուցել է քեզ միշտ կոտորածի, հրոյ և սրոյ մէջ գրօսնուլ, խաղաղութիւնն քեզ մի տեսակ պաղիժ ես համարում, և զուցէ դիշերներ երազումդ իսկ արեան ծովերի մէջ նաւավարութիւն ես անում, կամ եկեղեցու մէջ ժողովրդին քարոզելու դրազում։ Ի՞նչ հարկ կայ պատերազմի, թող որ Հայաստանի լեռներ և դաշտեր փոքր ինչ ցամաքին ի զուր թափած Հայ արիւնից։ Պատերազմի դաշտում բոյս չէ բուսնում, ոռնակոխ է լինում, թող որ Հայաստան մի քիչ միջոց խաղաղ օր և արև տեսնայ։ Յազկերտ բնաւ չէ ցանկանում իւր նախորդաց նման Հայոց թա-

գաւորութեան բնաջինջ կործանման, նա մտադիր է կրկին վերանորոգել մեր թագաւորութիւնն, միայն թէ մեք, Հայերս խոհեմութեամբ և հեռատեսութեամբ աշխատեմք ժամանակից օգուտ քաղել։ Մեք մինչդեռ չունիմք մարմնաւոր իշխանութիւն, ինքնավարութիւն, և միանգամայն զօրութիւն չունիմք պատերազմով կրկին ձեռք բերել զայն, պէտք է խելքով և հնարքով հասնեմք մեր նպատակին։ Յիմարութիւն է երևակայական կենաց յուսով ապրել, ազգութեան իսկական օգուտն չճանաչելով և չորոնելով. դու բոլորովին համոզուած ես մեր եկեղեցականաց խորամանկութեանց, որ իւրեանց շահու համար կրօնը ազգութեան կապ են համարում, և մեռցնում են ժողովրդի սրտի մէջ ազգութեան ոգին։ Պէտք է քաջ իմանալ որ, ազգի միութեան և պահպանութեան կապն է մի միայն մարմնաւոր իշխանութիւն, ինքնավարութիւն, որից զրկուել ենք այժմ։ Կրօնը բնաւ և բնաւ չէ կարող պահպանել ազգի միութիւնն և զոյացնել քաղաքական պայծառ կեանք, չէ կարող պահպանել լեզու, գպրութիւն, և հայրենիք, իսկ իշխանութիւնը պաշտպան և պահապան է կրօնի, և ազգի միութեան։ Ես ասում եմ, որ զուր է կրօնի պատճառով Յազկերտի բարկութիւնն շարժել անտէր Հայաստանի վերայ, հերիք է խարեմք մեր անքաղաքագէտ եկեղեցականաց և նոցա նենգութեանց, որք բռնանալով մարդոյ ազատ խղճի վերայ, ազգի կործանման պատճառ են լինում, իւրեանց կամաց և ձեռաց խաղալիկ շինելով մեր թագաւորաց և նախարարաց, օգուտ քաղելով ժողովրդի տգիտութիւնից, հետևելով Եբրայեցի մոգ Մովսէսին և պարթև Գրիգորին։ Մովսէս Եբրայեցիք դերի շինեց իւր եղբայր Ահարոնին ու Ղևտական ցեղին. խեղճ ժողովրդին անձրևից զրկեց, կարկտով կոտորեց, բարեբեր Եգիպտոսից հանեց, անապատի մէջ ջարդեց։ Իսկ պարթև Գրիգորն իւր տոհմն տէր և իշխան կարգեց Հայոց մարմնաւոր իշխանութեան, և ամբողջ Հայ ազգի մտաց և հոգու վերայ։ Դու ուսեալ ես ու պատմագէտ, կարդացել ես Մովսէս Խորենացու գրած Հայոց պատմութիւնն, Հայոց թագաւորներից նոքա միայն քաջ և յաղթող են եղել՝ որք հոգևորականաց իշխանութեան տակ ենթարկուած չէին, իսկ Տրդատից յետոյ յաջորդող թագաւորներն թոյլ, թմրած, և ազգի նուաղելու և թշուառութեան պատճառ են եղել, լսելով հոգևորականաց անքաղաքագէտ խորհրդոց և նոցա խարէութեանց։

Վարդան.

Տէր Մարդպան, դու քաղաքավարութեամբ յանդիմանեցիր իմ փաստերս, երկարաբան, ունայն ճարտարաբան և ճառախօս անուանելով զիս. բայց դու ինքդ աւելի երկարաբան ճառախօսութեան մէջ մտար առանց մի օրինաւոր փաստի, հետևելով Յունաց կայսր Յուլիանոս ուրացողին, ցանկանում ես բառնալ Քրիստոնէութիւն և հաստատել կռապաշտութիւն։ Ասացիր որ, մեր կրօնականներն բռնանում են մարդոյ ազատ խղճի վերայ. նոցա ազգաշէն գործերն ու խորհուրդներն խաբէութիւն համարեցիր, և անքաղաքաքաղիտութեան արդիւնք։ Դու ձևանում ես քաղաքագէտ, բայց մտքիդ չափ չունիս քաղաքագիտութիւն։ Վասն զի եթէ մեր կրօնի հիմնատութիւն լինէր կամ մարդկային մտաց ծնունդ, այնու ամենայնիւ դարձեալ մեք իբրև ազգի ներկայ խելահաս գործող անձինք, պարտաւոր էինք պինա բռնել մեր կրօնն և պաշտպանել իբրև ազգի և ժողովրդի միութեան կապ և հոգի, ինչպէս արել են աշխարհի կռապաշտ վեհապետներն. որք թէև քաջ ճանաչել են իւրեանց կրօնի ստութիւնն, բայց ազգի ամրողջութեան չվնասելու համար, իւրեանք ևս պաշտել ու պահպանել են ժողովրդի պաշտածն ու յարգածն։ Սակայն մեր կրօնի հիմն ու հաստատութիւնն աներկրայելի ճշմարտութիւն է, երկնային է, ու բոլորովին բարոյականութեան և երջանկութեան աղբիւր է, կեանք է հոգւոյ և մարմնոյ. ժողովուրդը իւր մարմնոյ և արեան հետ միացրել է զայն ինչպէս հոգի, և հարիւր անգամ մահ յանձն է առնում, քան թէ նորա մի նշանախեցն ուրանալ, երբ մեք չպաշտեմք այսպէս նուիրագործուած ճշմարիտ և ուղիղ կրօնն, ոչ միայն մեր ազգի ընդհանրութեան կը վնասեմք, այլ և ապագայ սերնդոց ատելութեան և նզովքի կենթարկուի մեր յիշատակն։ Տէր մարդպան, մեր կրօնականներն չեն քարոզում իւրեանց օգուտն, ինչպէս ասում ես, այլ միայն այն են քարոզում, ինչ որ մեր կրօնի հիմնադիրն Յիսուս և նորա աշակերտներն քարոզեցին հոգւով սրբով լցուած, պարթև Ս. Գրիգոր Լուսաւորիչն ոչ թէ Հայ ազգին տէր և դատաւոր եղաւ, այլ խնամող Հայր, թէ ինքն և թէ իւր սերունդն ճշմարիտ Մովսէս եղան Հայ ազգին, փրկելով ապիտութեան և կռապաշտութեան բարոյական Փարաւոնից, հասուցին լուսաւորութեան և ազատութեան Աւետեաց երկիրը, ուր

փոխան մեղրի և կաթի, բղխում է կեանք և լոյս։ Մեք պարտաւոր ենք երախտագէտ լինել մեր սրբազան կրօնականաց, որք անձնադիր հովվի նման իւրեանց անձներ զրին Հայ ազգի փրկութեան վերայ, ազատեցին հոգևոր և մարմնաւոր գերութիւնից։ Դու ակնարկում ես ինձ կարդալ Մովսէս Խորենացու պատմութիւնը, ես արդէն բերանացի սովորել եմ ամբողջ, և այն եզրակացութեանն եմ հասել ճշմարտէս, որ եթէ չլինէին մեր հոգևորականները, շատ վաղուց պիտի կործանուէր մեր թագաւորութիւնը, հէնց Տրդատից յետոյ իւր անմիաբան, մոլի նախարարաց և անարժան յաջորդաց ձեռքով։ Ինչ դեր որ խաղաց Պարսից Վռամ թագաւորը, նոյն դերն արդէն խաղացած պիտի լինէր իւր նախորդ երկայնակեաց Շապուհ։ Դու պատմութեան միայն մի երեսն ես կարդացել հարևանցի կերպով. Քրիստոնէութիւնից յառաջ թէև Հայաստանի անհաշտ թշնամի էին Պարսիկները, Հռովմայեցիք և Յոյները և այլ ազգերը, բայց նոցա ամենի կրօնը զրեթէ մի էր, այսինքն կռապաշտութիւն, միևնոյն կուռքն էին պաշտում, զանազան անուններ տալով միևնոյն չաստուածին, ինչպէս այժմ բոլոր քրիստոնեայ ազգերը միևնոյն Քրիստոս և Աստուածն են պաշտում ազգային տարբեր ծէսերով։ Ուստի արևմտեան ազգերը—Յոյները և Հռովմայեցիք, երբ կամենում էին պատերազմել Պարսից դէմ, ցանկանում էին բարեկամանալ և դաշնակցել Հայոց հետ. Պարսիկն ևս աշխատում էր նախ ինքը բարեկամանալ Հայոց հետ և նոցա ձեռքով յաղթել իւր թշնամեաց. Հայաստան թէև ընկած էր երկու անհաշտ թշնամեաց միջտեղ, պատերազմի դաշտ էր դարձել, բայց երբեմն միոյն և երբեմն միւսի հետ դաշնակցելով յաղթող էր լինում, վասն զի իւր թագաւորներից շատերը քաջ էին և նախարարներն ևս միաբան, բայց երբ Հայաստան և արևմտեան ազգերն ընդունեցին քրիստոնէութիւն, Պարսիկն իսպառ իւր յոյսը կորեց Հայոց բարեկամութիւն, դաշնակցութիւն և խնամութիւն ձեռք բերելուց, կրօնի տարբեր սկզբունքի պատճառով, սկսաւ շարունակ պատերազմել թէ Հայոց և թէ Յունաց դէմ. ծագեցաւ Արևելեան անվերջանալի խնդիրը, թերևս շատ դարեր էլ պիտի շարունակի այս ողբերգութեան ներկայացումն, միայն անձինք պիտի փոխուին, միևնոյն դերն խաղան, Հայաստան լինի պատերազմի տեսարան և ասպարէզ, ինչպէս եղաւ։ Տրդատի յաջորդաց թուլութիւնը, հակաքրիստոնէական վարքը և նախարա-

բայց անմիաբանութիւնը վերջ տուին Երշակունեաց թագաւորութեան, չլսելով կրօնականաց խելացի և շահաւէտ խրատուց, որք միջնորդ էին թագաւորութեան շարունակութեան։ Վերջապէս մեր հիւանդ ոչխար Արտաշրի փոխարէն ընդունեցին Պարսիկ առողջ գազանը, որ այժմ ուզում է բոլորովին պատառել և լափել մեզ, եթէ չարթնանամք և չզգաստանամք պահպանել մեր կրօնը, լեզուն գպրութիւնը, ազգն ու հայրենիքը։ Մեր յոյսը Քրիստոսի վերայ դնելով, անշուշտ պիտի հասնենք մեր նպատակին։

Վ. ՊՈՍԱԿ.

Ուրեմն քո նպատակն է, որ մեք թողումք մեր ամենայն ինչք և ստացուածք, մեր հայրենիքն ու մեր ազգը, և մի մի սև վերարկուի մէջ փաթաթուինք, քաշուինք։ լեռներ խոտաճարակ ճգնաւորներ լինելու, որ ապագայ Հայ սերունդը պաշտէ մեր ոսկորներն, իբրև ջերմեռանդն քրիստոնէի ոսկոր։ և կամ թէ անհեռատեսութեամբ յանդգնաբար գնալ Պարսից անթիւ բազմութեան դէմ, նոցա սրերը լուանալ, և ազգի բնաջինջ լինելու պատճառ լինել, և կամ փտել Անյուշ բերդի մէջ, այն յուսով որ ապագայն մեզ ընդունէ իբրև պաշտպան կրօնի։ Վայ այնպիսւոյն, որ ապագայի յուսով է ապրում, միթէ արժէ ապագայի ունայն յուսով կամ երևակայական կենաց ակնկալութեամբ զոհել մեր և ազգի իրական կեանքը։ այդ էլ մի տեսակ յիմարութիւն է կրօնամոլների։ Մեք քաղաքական ասպարիզից զրկուած ազգ ենք այժմ, պէտք է մեր ամենայն ինչք և մեր կեանքն անգամ յօժարութեամբ զոհենք միմիայն մեր կորցրածը կրկին ձեռք բերելու։ երբ այդ ծանր ու մեծ զոհաբերութիւնը չէ պահանջւում մեզանից, այլ միայն մեր կրօնական համոզմունքը փոխել, յիմար կրլինիմք, եթէ չընդունենք այս թեթև առաջարկութիւնը։ Մթթէ Պարսից մէջ պակաս իմաստուն մոգեր կան, քան մեր վարդապետները, զուցէ նոքա քննել են ամեն տեսակ կրօններն ու օրէնքները և գտել են՝ որ ազգի համար աւելի լաւ է, աւելի օգուտ է Զրադեշտի օրէնքը քան Մատթէոսի կամ Մարկոսի թուլացուցիչ վարդապետութիւնը, որ Մովսէսի Օրէնքից աւելի թոյլ է, որև հրամայումն չվարել, չցանել, չքաղել և չշահմարանել, ազգաւոր նման յոյս դնել այլոց ցանածի վերայ, կամ ոչխարի նման անմտունչ, կամն պահանջողին բուրդն էլ տալ, և կաշին էլ։ շապիկն ուզո-

ղին բաձկոնն էլ տալ, ծառայել անվարձ, և ապտակողին միւս երեսն էլ դարձնել։ այլն, բայց ես մտադիր չեմ հերքել Աւետարանը և հաստատել մաղդեղանց օրէնքն, այլ այս եմ կամենում ասել, որ Յազկերտ մտադիր է Հայաստանի մէջ մտցնել այն, զուցէ և Բիւզանդիոնի մէջ էլ։ մեք կամայ, ակամայ պարտաւոր ենք ընդունել, որ մեր ազգի և հայրենեաց կործանման պատճառ չլինիմք։ այժմ նա սիրով ու խօսքով է հրամայում մեզ ընդունել, եթէ չլսենք, զէնքով և բռնութեամբ պիտի կատարէ իւր մտադրութիւնը։ Տեսնում ես ահա, Յունաց կայսր Թէոդոս ինչ խելքով և հնարագիտութեամբ վարուեցաւ։ իւր հայրենիքն ու ազգն ազատելու նպատակաւ մեծ ընծայներով Ենատոլ զօրապետի ձեռքով հաշտեցրեց Յազկերտին, կատարեց նորա պահանջը, և այն Պարսիկները, որ Քրիստոնէութիւն ընդունելու նպատակաւ Պարսկաստանից փախած էին Բիւզանդիոն, կայսեր մօտ, յետ դարձրեց յօժարութեամբ։ Նա՝ որ հզօր կայսր էր, խոհեմութիւն համարեց կատարել Յազկերտի պահանջը, խաղաղութիւնը օգուտ համարեց հայրենեաց, չուզեց պատերազմել յաղթութեան երկբայելի յուսով։ մեք որ իշխանութիւնից զրկուել ենք, և Հայաստանի մի մասն Յունաց ձեռքում լինելով՝ կայսրն անշուշտ չէ թողնի մեր ազգակիցներին մեզ օգնել, որոնք առանց այն էլ արդէն խորթացել են, ուրեմն ի՞նչ կարող ենք անել, պէտք երկու չարեաց փոքրագոյնն ընդունել։ մեր հայրենիքն ու ազգը պաշտպանելու համար ընդունենք նորա առաջարկութիւնը։ միևնոյն է, թէ անեւևոյթ Աստուծոյ ենք զոհել, թէ երևելի արեգական։ Ուրիշ մի աշխատիր համոզել ինձ պատմագիտական հանճարով։ ես ինչքան համոզուել եմ, որ զու ուսմունքով ինձանից աւելի ես, այնքան համոզուել եմ, որ փորձառութեամբ և հնարագիտութեամբ ինձանից պակաս ես, թէպէտ սիրում ես ազգի և հայրենեաց օգուտը, բայց թէ որն է, չգիտես։ Յազկերտ ցանկանում է մեր կրօնը միացնել իւր կրօնի հետ, ոչ թէ ազգը կամ հայրենիքը։

Վ. ՊԵՊՈՆ.

Դու բոլորովին սխալւում ես, միթէ Յազկերտի նպատակը միայն կրօն միացնելն է, ոչ բնաւ, նորա նպատակն է Հայ ազգը Պարսից հետ ի մի ձուլել կրօնի ձուլմամբ։ առանց մեր կրօնի մեք կարող չենք պահել մեր ազգի գոյութիւնը, մեր կրօնի վարդապետութիւնը թու-

լացուցիչ չէ, ինչպէս կարծում ես, չէ արդելում մեզ մարմնաւոր իշխանութիւն և հարստութիւն ձեռք բերելուց. սխալ մի՛ մեկներ անսխալ Աւետարանը, որ ոչ Մատթէոսի և ոչ Մարկոսի մահկանացու մտաց ծնունդ է կամ վարդապետութիւն, այլ Հոգւոյն սրբոյ խօսքն է։ Մեր այս դառն վիճակի սկզբնապատճառը մեր կրօնի դէմ մեղանչելն է և աւետարանի հակառակ գործելն է։ Թէ Յաղկերտ և թէ քրիստոնեան համարած մոգերը քաջ համոզուել են, որ զանազան աղդաց վերայ տիրելը ժամանակաւոր է. երբ նոքա տարբեր կրօն ունին, չեն միանում տիրող տարբի հետ. նորա համար աշխատում են նախ կրօնը միացնել, ապա ազգութիւնն ինքնին միանում է։ Մեր կրօնը չէ հրամայում մեզ մեր ստացուածքն օտարին տալ, ով կամի փորձել, թող Ղէոնդ քահանայից մի շապիկ պահանջէ յանիրաւի, տեսնէ թէ բաճկոնն էլ վրայ է ընդունում, թէ իւր կեանքն էլ վրայ է դնում. մեր կրօնը չէ ստիպում, որ ամեն ոք ճգնաւոր լինի. դու զուցէ հմուտ լինիս քաղաքագիտութեան մէջ, ոչ թէ Աւետարանի մեկնութեան. քո ազդասիրութիւնդ հաւասար է իմ կրօնասիրութեան, այս տարբերութեամբ միայն, որ իմ կրօնասիրութեամբ պահպանւում է ազգի միութիւն, իսկ քո այդ կերպ ազդասիրութեան ընթացքը բոլորովին վնասում է. պէտք քաջ միտք առնես, որ ազգն է ինչպէս ծծկեր մանուկ, կրօնն է կաթն, եթէ կամենում ես պահպանել մանուկի կեանքը, պահպանիր կաթն, վասն զի մանուկն առանց կաթնի ապրելու անկարող է, ուստի ոչ ազգն առանց կրօնի և ոչ կրօնն առանց ազգի կարող է գոյութիւն ունենալ։

Վ. ՊՈՍԱԿ.

Բայց երբ Յաղկերտ երևակայական կենաց փոխարէն տալիս է մեզ իրական կեանք և իշխանութիւն, մեք չպէտք թողումք իրականը, զանամք ստուերի ետևից։ Նա խոստանում է մեզ տալ Հայոց թագաւորութեան թագն ու գաւազանը, միայն թէ մեք փոխենք մեր այս կրօնական համոզմունքը, ընդունենք նորա ընդունածը, սիրենք նորա սիրածը, միանամք նորա հետ, յաղթենք Յունաց Յաղկերտի ձեռքով, ազատենք Հայաստանի արևմտեան մասն, միացնենք մեզ հետ։ Պարսիկն իսկզբանէ օգնել է մեզ, իսկ Յոյնը միշտ խաբել ու վնասել է, ուրեմն հէնց ժամանակն է Պարսից հետ բարեկամանալ և մեր ազգի վրէժն առնել Յոյնից։ Յիշիր մեր Պապ թագաւորի ա-

նողորմ մահը Յունաց կայսեր ձեռքով, և Վարազդատի Իսլանտա կղզին աքսորելը։

Վ. ԱՐՊԱՆ.

Կրկին ասում եմ, պատմութեան մի երեսն ես կարդացել, Պարսիկը ոչ մի ժամանակ չէ օգնել Հայոց, այլ պարթևական տոհմն էր մեզ բարեկամ, սկսած մեծ Երշակից մինչ վերջին Երտաւան թագաւորը. իսկ Սասանեան Երտաշրից մինչ յազկերտ Բ. զուցէ և միշտ, մեր ազգի անհաշտ թշնամի եղել, բայց Յոյները շատ և շատ անգամ օգնել են մեզ։ Պապ և Վարազդատ թագաւորները պարտաւոր էին երախտագէտ լինել Յունաց, իբրև բարերարի, բայց ապերախտ գտնուեցան ու պատժուեցան արդարապէս։ Հայկազանց իշխանութեան ժամանակ միայն օգնել են մեզ Պարսից թագաւորները և փոխադարձ ստացել են մեր կրկնակի օգնութիւնը։ Ահա պատմութեան անցեալը, իսկ ներկայն պարզ է ամեն Հայու աչաց առաջ։ Ասացիր թէ, Յաղկերտ տալիս է մեզ իշխանութիւն, ոչ Վռամն իրաւունք ուներ կամ կարող էր բառնալ մեր իշխանութիւնը և ոչ Յազկերտ կարող է տալ կրկին, միմիայն մեր անմիաբանութիւնը զրկեց մեզ իշխանութիւնից, և մեր միութիւնը միայն կարող է կրկին ձեռք բերել զայն. յիմար է այն ազգը, որ ինքն անմիաբան և անշարժ նստած, ցանկանում է այլոց օգնութեամբ իշխանութիւն և աղատութիւն ձեռք բերել։ Մեք այն ժամանակն յիմարացանք, որ չլսեցինք մեր բարերար Սահակայ խրատուց, մեր հիւանդ ոչխարը փոխեցինք Պարսից առողջ գաղանի հետ, մեր ազատութիւնը ծախեցինք կամաւ, մեր արթուն, անձնազիր ու երախտաւոր հովիւի գաւազանը տուինք փառամոլ, ագէտ Գագիշոյին և Բրքիշոյին, որոց ձեռօք մեր Ս. եկեղեցու մէջ ագէտ, մոլի և վատ Պետրոս ու Զանդակ պաշտօնեաներով լցրինք։ Այս ցաւալի և դառն ճշմարտութեան մեք ականատես վկայ եմք, զոր մեր նախորդները գործեցին. մեք բոլորովին յիմար կ'լինիմք՝ եթէ հետևիմք մեր նախնեաց ազդակործան խորհրդին և գործին։ Տէր մարդպան, մեք տակաւին բոլորովին յաղթուած չենք, կարող եմք կրկին անկախութիւն կամ ինքնավարութիւն ձեռք բերել, եթէ միաբանիմք, եթէ լսեմք մեր հովիւ Յովսէփ եպիսկոպոսին, դաշնակցեմք նաև մեր կրօնակից Յունաց և Հոռանից հետ, կարող կլինիմք ոչ միայն պահ-

պանել քրիստոնէութիւնը, ձեռք բերել մեր թագաւորութիւնը, այլ նաև բառնալ Պարսկաստանից կռապաշտութեան խաւարը. բայց նախ քան այդ ամենը, պէտք է մեր կրօնական և քաղաքական ոյժը միացնեմք, բառնամք մեր մէջից կռապաշտական աղանդներն ու նախապաշարմունքները, որ դեռ Հայաստանի մութ անկիւններում ծածկուած են: Յորդորեմք ուսումնական անձանց, յանձն առնուլ քարոզութեան պաշտօն, գնալ քարոզել նորանց ուղիղ հաւատը և ազգային եկեղեցու ծոց մտցնել: Որովհետև մի ազգի անդամոց մէջ ծագած զանազան աղանդներն իբրև որոմն ապականում են մաքուր ցորեանը, թուլացնում են ազգային միութեան գաղափարն ու կապը. ազգի մէջ ծագած աղանդներն, այո՛, փուշ են և խեղդում են ընտիր բոյսերը, եթէ չեմք կարող իրաց քաղել որոմն ու փուշը, գոնէ աշխատիմք արթուն պահապաններ դնել, որ թշնամին չհամարձակի շարունակ ցանել որոմն ու փուշ: Յաղկերտ այսօր կրօնի պատրուակաւ է պատերազմում, վաղն անշուշտ լեզուի և դպրութեան, միւս օրն Հայրենեաց համար պիտի պատերազմի. յիշիր Շապուհի արածը՝ որ մեր Հայրենիքը յափշտակելու համար էր պատերազմում, բայց նախ և առաջ աշխատում էր ուրացող Մեհրուժանի ձեռօք հաւաքել, այրել զրեանքը, մշտապէս տիրելու նպատակաւ: Ուրեմն մեք երբ այժմից չմիանամք, չլսեմք մեր կրօնապետին, փոխենք մեր կրօնն իշխանութիւն ձեռք բերելու դիտմամբ. մեր մէջ կրօնական կուսակցութիւններ պիտի ծագին, ներքին պատերազմներ պիտի օգնեն արտաքին պատերազմին, ու սպառի մեր ոյժը, այն ժամանակ մեք մեր ձեռօք պիտի թաղեմք մեր ապագայ յոյսը, և ականատես պիտի լինիմք կործանման Հայ լեզուի, դպրութեան, ազգութեան և Հայրենեաց, բոլորովին ի մի ձուլուելով Պարսից հետ, և ո՛ գիտէ, ժամանակի հոսանքն ինչ տեսակ կրօն մտցնէ նաև Պարսից մէջ և մեք նոցա հետ արդէն միացած, ազգովին նոյն կրօնին դիմեմք ապագային: Ուստի մեր ազգի շահը պահանջում է պաշտպանել մեր Կրօնն իբրև կապ միութեան ազգի:

Պ. ասաց.

Յունաց վերայ յոյս դնել կարելի չէ, նոքա խաբող, նենգ և խարդախ են, նոքա ցանկանում են մեզ կրօնքով միացնել իւրեանց հետ և ի մի ձուլել, իսկ Աղուանք մեզանից աւելի կարօտ են օգնութեան,

մեք մեր անգուլխ վարչութեամբ եթէ պատերազմելու յանդգնիմք, Պարսից անթիւ զօրաց նախաձաշիկ անդամ լինելու քիչ եմք, այն ժամանակ այդ քո օդային ամրոցներդ օդի մէջ պիտի ցնդին, մի աւուր մէջ Հայ անունը պիտի ջնջուի աշխարհի երեսից, և այդ քո պաշտած ու պաշտպանել ուզած կրօնդ պիտի կորցնէ իւր զոյութիւնը:

Պ. ասաց.

Բայց պէտք է յուսալ աներկբայ, որ Հայոց միութիւնը հրաշքներ կարէ գործել, վասն զի ամէն անդամ որ յաղթուել եմք օտարներից, միմիայն մեր երկպառակութիւնը և ներքին պատերազմն է եղել սկզբնապատճառը, որոյ համար օտար ազգերն աշխատում են նախ մեր միութիւնը ցրուել, բաժանել ու տիրել: Մեր մէջ զըժբաղդաբար ազգային միութեան ոգին մեռած է, որովհետև Հայ ազգը զանազան ազգաց հատուածներից է բաղկացել, իւրաքանչիւր ցեղն իւր յատուկ բնաւորութիւնն ունի. միայն կրօնի մէջ կարելի է յուսալ միութիւն, որ ամենից սեպհական է, աշխարհական փառաց համար դժուար են միանում Հայերը. թող ներուի ինձ ասել, որ մեք այնքան չեմք զարգացել, որ մեր հայրենի ժառանգութիւնը, կամ մեր քրտինքով ձեռք բերած կամ պարգև ստացած սեպհականութիւնը զոհեմք մի տոհմի կամ մի անձի համար, նորան տէր և իշխան կարգել ընդհանրութեան, թէև զարգացեալ ազգաց էլ դժուար է այս: Ես ամենայն յօժարութեամբ յանձն կառնէի իմ գնդիս հետ թափել մեր արեան վերջին կաթիլներն զքեզ թագաւոր պսակել Հայոց և պաշտպանել, եթէ մեր նախարարաց մեծ մասն ինձ հետ միաբանէր այդ մասին, և ներքին խռովութիւն և պատերազմ չծագէր մեր մէջ: Բայց երբ այժմ այս անկարելի է համարւում, թերևս ապագայում շատ հեշտ լինի, երբ դու միաբանես մեզ հետ պաշտպանել կրօն, յաղթել Պարսից զոռոզութեան, այն ժամանակ ամբողջ ազգը կըհամաձայնի նախագահութեան փառքն ու պատիւը տոհմական ժառանգութեամբ տալ քեզ իբրև վարձ և պարգև կրօն, ազգ, լեզու, դպրութիւն և հայրենիք ազատող բարերարի: Նաև քաջ համոզուել եմ, որ Հայերը տակաւին այնչափ չեն զարգացել, քաղաքակրթուել և լուսաւորուել, որ կարենան հանրապետական կամ հասարակապետական կարգով կառավարուել: Ուրեմն ապահով կառավարութիւն կրօնական կառավա-

բութիւնն է, որ մեր կրօնականաց պէտքէ տալ, այն ևս ոչ տոհմական ժառանգութեամբ, այլ ազգային ընտրութեամբ, լաւագունին տալով, հնազանդելով նոցա, մինչ ժամանակն ու հանգամանքն որոշէ քաղաքական և կրօնական կառավարութեան պաշտօնները, դարձեալ երկուքն ևս միմեանց զուգընթաց և առընչակից գրութեան մէջ պահելով։ Տէր մարդպան, ես օդային ամրոցներ չեմ շինում, այլ փորձի և իրականութեան տէսակէտից եմ խօսում։ Յաղկերտ քաջ գիտէ որ մեզ բաժանելով միայն կարող է յաղթել, գիտէ նաև որ բռնութեամբ չի կարող մեզ կրօնափոխ անել ազգովին, ուստի քաղաքագիտական խորամանկութեամբ, քեզ կամ ինձ կամ մի ուրիշի պիտի խոստանայ տալ Հայոց Թագաւորի Թագն ու դաւազան, գուցէ և խոստացել է մի քանիսին ևս, որպէս զի մեր մէջ կրկին ներքին շփոթութիւն և խռովութիւն յարուցանէ, մեր ոյժն սպառէ և յետոյ առանց դժուարութեան կարօղանայ տիրել և իւր նպատակին հասանել, կրօնիւ և ազգաւ միայնելով զմեզ իւր ազգի հետ։ Վասն զի այն իշխանն որ ազգի համահաճութեամբ չէ եղել իշխան, նա չէ կարող ապահով իշխանութիւն վարել և համակրութիւն գտնել ազգից, ուրեմն մեզ հարկաւոր չէ Յաղկերտի խոստացած կամ տուած իշխանութիւնը, նա այսօր քեզ մարզպան է կարդել, ինձ ազարապետ է գրել, վաղն ինքնահաճութեամբ կամ մի ըմբոստ չարախօսի գրգռմամբ կը գրէ նոյն պաշտօնից և ուրիշի կը յանձնէ. ուրեմն մեք այն ժամանակ միայն ապահով կլինիմք և կարող կլինիմք պարծելու մեր իշխանութեան փառաց ու պատուոյ վերայ, երբ ազգ ինքն առանց մեր հետամտութեան տայ մեզ։ Զգէտքէ բնաւ յոյս դնել ոչ Յաղկերտի և ոչ մեր պաշտօնի վերայ, առ այժմ յօժարութեամբ կրտամք նորա բոլոր ծանր հարկերը, միայն թէ նա մեր կրօնին ձեռնամուխ չլինի, մեր եկեղեցու դռնից ներս ոտ չդնէ. ապա թէ ոչ մեք իհարկից ստիպեալ կըպարտաւորինք ապստամբել նորանից, կամ Յունաց կողմն անցնել կամ ինքնուրոյն պատերազմել, պատուաւոր կերպով յաղթել կամ յաղթուել, ապազայ սերնդոց նզովից և արհամարհանաց չենթարկել մեր յիշատակը. այս կերպով, այս նպատակաւ յաղթութիւնն ու պարտութիւնը մի և նոյն մրցանակը կրտայ մեզ, ներկայի և ապագայի ձեռօք, թող թէ երկնաւոր հանդիսադիրը կվարձատրէ մեզ անշուշտ, մեր նպատակի համեմատ,

Վասակ.

Տակաւին մի և նոյն յամառութեան մէջ ես, չկարացի համոզել քեզ, որ ի զուր է ընդդիմանալ Յաղկերտին, մեք կարող չեմք մի քանի հազար խառնիճաղանձներով պարսից անթիւ բազմութեան դէմ դնել, ներկայ և ապագայ ազգերը մեզ յիմար և յանդուգն պիտի համարին. հազար անգամ կրկնեցի որ մեր անքաղաքագէտ հոգևորականաց լսելն Հայրենեաց և ազգի կորուստ կը պատճառէ. հազար անգամ կրկնեցի որ Պարսիկը մեզ թշնամի չէ, մի թիզ հող չէ պահանջում մեզանից, գուցէ և կօգնէ մեզ, իսկ Յունաց ձեռքից Հայաստանի Երևմտեան մասն էլ։ Աշխարհի վերայ ամէն ազգ իւր կրօնը նախապատիւ է համարում, և միանգամայն ճշմարիտ և ուղղափառ, կարելի է որ բոլորն էլ ճշմարիտ լինին, կամ սուտ և սխալ. մի՞թէ մեր բոլոր նախնիք զժոխք գնացին, մեր այժմեան կրօնը չունենալու պատճառաւ։ Ամէն բան պէտք է խոնարհի ժամանակի պահանջին, զու պատմագէտ ես և գիտես Հայոց անցեալը։ Հայկից մինչ Անուշաւան ասուռածապաշտ էին, անտի մինչ Հայկազանց տէրութեան վերջը և Երշակունեաց Երշամեան Երգար նմանող եղան օտար ազգաց, խոնարհեցան ժամանակի պահանջին, կռապաշտութեան դիմեցին ազգովին, յետոյ Երգար միայն ընդունեց քրիստոնէական հաւատը, բորոտութիւնից բժշկուելու յուսով, որ առանց նորան էլ գուցէ կը բժշկուէր. նորանից յետոյ իւր յաջորդները կրկին կռապաշտութեան մէջ ընկան մինչ Տրդատ, որ համոզելով կամ խաբելով պարթև Գրիգորին, կամ թերևս համաձայնելով ժամանակի պահանջին, հետևեցաւ Յունաց մեծն Կոստանդիանոս կայսեր, թողուց կռապաշտութիւնը, իբրև մի քաջ և անգութ յեղափոխապետ անխնայ կործանեց հոյակապ կռատուներն, որոնք զարդ էին Հայաստանին իւրեանց ճարտարարուեստ շքեղութեամբ, բռնի քրիստոնէութիւն ընդունել տուեց Հայոց։ Եւ եթէ լաւ ուշադրութեամբ քննենք, Հայերը կռապաշտութեան կրօնիւ աւելի միաբան, ազգասէր, հայրենասէր, առաքինի, քաջ և յաղթող էին, քան քրիստոնէական կրօնիւ, որ մարմնոյ զրկանաց և թշուառութեան պատճառ է, թէ նորանով մի բարի պիտի լինի հոգուն, այն էլ կասկածելի է, ու երևակայական։ Այժմ ժամանակի պահանջն ու Յաղկերտ պահանջում են կրկին ազգովին կրօնափոխութիւն, պէտք է հնազանդիլ, եթէ կամենում ենք աշխարհի երեսի վերայ իբրև ազգ

ապրել և ապագայ ունենալ, Հրէից պէս չզրկուել ամենայն յաջողութիւնից, և հայրենիքից, որք յամառութեամբ արհամարհեցին աշխարհի յաղթող տիրողներին, խաբեբայ Մովսիսի գուշակութեանց վերայ դնելով իւրեանց յոյսը, ի վերջոյ տիրել աշխարհի: Հրէից ազգն իւր կրօնիւ եթէ լաւ ապագայ ունենայ, Հայն ևս թող յուսայ ունենալ այս կրօնիւ, որ ատելի է թէ յաղթող Պարսից և թէ նոյն իսկ ամամայ պաշտօղներին:

Վարդան.

Շատ խիստ և սխալ դատողութիւն ես անում, թողումք հոգևոր կէտը, կրկին ազգային տեսակէտից դիտենք մեր կրօնին, մեք այժմ քաղաքական իշխանութեան աստիճանից վայր իջել ենք, մօտ ենք խորխորատի մէջ ընկնելու, սանդուխի ներքին աստիճանի վերայ կանգնած մի նեցուկ և յենարան ունիմք մեր ձեռք, նորանով կարելի է մի օր վեր բարձրանալու յոյս ունենալ, և այս նեցուկն ու յենարանը կրօնն է, եթէ թողումք զայն և օտարի կրօնն ընդունենք, ինչպէս ասացի, լեզուով և ազգութեամբ ևս կը ձուլուենք նոցա հետ, ազգի ապագայ սերունդն իբրև խորթ որդի պիտի մտիկ տայ իւրեանց պատմական ծագման, կամ հայրենեաց վերայ. յայտնի օրինակներ մեր առաջ կան, զու վեր ի վերոյ ակնարկեցիր Հայոց կրօնափոխութեան ժամանակները միայն, պէտք է քննել և խնամտասիրել նախ թէ, Հայ ազգն ինչ ազգերից, ինչ տոհմերից է բաղկացել, եղել մի խմբ, և յետոյ կրօնը քննել: Հայ ազգ միայն Հայկի սերունդը չէ, բազմաթիւ ազգերից հաւաքածոյ մի ձուլած է. Հայկի անունով Հայ կոչեցան նախ իրան հնազանդող ազգերն իւր սերունդի հետ, յետոյ Երծրունիք, Գնունիք Բանանիդեանք, Բաղրատունիք, Երշակունիք, Առաւիղեանք, Վանանդեցիք, Մամիկոնեանքս, և ուրիշ շատ ցեղեր, զանազան ազգաց հատուածներ, դաղթականներ, երբ միացան Հայ տարրի հետ, թէ կռապաշտութեան և թէ քրիստոնէական կրօնիւ, թողին իւրեանց բնիկ լեզուն, դպրութիւն, հայրենիք և ազգ, և այսօր միայն Հայ կրօնի և ազգի օգուտն են խորհում, պատճառն հայ կրօնիւ մի ձուլուելն է, որք Հայ անունով մկրտուել են, Հայ լեզուն և դպրութիւնն ունին, Հայաստանում սեպհական հայրենիք, էլ բնաւ չեն յիշում իւրեանց պատմական անցեալը, իւրեանց ծագումը, բնիկ ազգն ու լեզուն կամ հայրենիքը, որովհետև Հայ տարրը զօրեղ էր և շատ, կուլ տուեց և կորցրեց իւր մէջ, միացրեց իւր հետ ինչպէս ծովը ջրի կաթիլները: Գիտենիր տես, Երծրունիք կամ Գնունիք որ Ասորի էին, այժմ ունի՞ն Ասորի լեզու կամ կրօն, սիրում են Ասորեստան իրրև իւրեանց հայրենիք. Բաղրատունիք՝ որ Հրէայ էին, այժմ ունի՞ն Մովսիսական կրօն, Եբրայական լեզու, սիրում են Աւետեաց երկիրն իբրև իւրեանց հին հայրենիք, ցանկանում են վերադառնալ նորա ծոցը: Նոյնպէս Բանանցի Բանանիդեանք, Ալան Առաւիղեանք, Պուլղար Վանանդեցիք, մեք Ձինացի Մամիկոնեանքս ունիմք մեր նախնական լեզուն ու կրօնը: Այսպէս նաև շատ ցեղեր կորած են զանազան ազգաց մէջ: Ուր են հին ազգերը, Բաբելացիք, Մակեդոնացիք, Եգիպտացիք, Հռովմացիք, Ակիւթացիք, Եբրայեցի քրիստոնեայք և այլն, կորան կամ միացան այն ազգի հետ՝ որ ազգի կրօնն որ ընդունեցին: Եթէ կամենում ես տկարացնել մի ազգ, նորա մէջ կրօնական բաժանումներ և աղանդներ ցանիր, բաւական է, տկարացաւ այն ազգը. եթէ կամենում ես մի ազգ ջնջել աշխարհի երեսից, նորա կրօնը միացուր մի հզօր տիրող ազգի կրօնի հետ, բաւական է, կորաւ այն ազգը. եթէ կամենում ես բառնալ մի ազգի լեզուն, ջնջիր նոցա դպրութիւնը: Ի՞նչ է զանազան ազգաց սարսափելի ծախուց պատճառն, որ անում են, իւրեանց կրօնակիցներ որսալու դիտմամբ. յատուկ առաքեալներ ուղարկելով զանազան ազգաց և երկրի մէջ. ուրիշ նպատակ չունին, այլ միայն իւրեանց ազգն ստուարացնելու նպատակ: Ինչի՞ տիրող ազգն ստիպումէ հպատակաց իւր լեզուն խօսել, դարձեալ նոյն ի մի ձուլելու նպատակն է: Որովհետև բնական է, կրօնափոխը սաստիկ ոխերիմ թշնամի է դառնում իւր թողած կրօնին և նորա պաշտօղներին, ցանկանում է իւր հետ միացնել ամբողջութիւնն, որ ինքն հատուածեալ չիրևի, որ իւր նոր ընդունած կրօնին հաւատարիմ երևի, նոր սիրած—յարած ազգից յարգութիւն գտնէ: Եթէ իւր թողած կրօնն ուղղափառ էր և նոր ընդունածն ևս ուղղափառ է, նա ոչ այնքան կրօնափոխ և կրօնուրաց է, որքան ազգափոխ է և ազգուրաց. զորօրինակ, եթէ մեք Հայերս, դառնամք Յունադաւան կամ Պապական, կրօնափոխ չենք լինում, այլ ազգափոխ, թէև սկիզբը միայն կրօնափոխ ենք երևում, բայց մի քիչ ժամանակից

յետոյ, Յոյն կամ Պապական անուն պիտի կրնք և այլք ևս նոյն անունով պիտի ճանաչեն զմեզ։ Եթէ թողած կրօնն անուղիղ էր և սուտ, նոր ընդունածն ուղիղ և ճշմարիտ է, կամ թողած կրօնն ուղիղ և ճշմարիտ էր, նոր ընդունածն անուղիղ և սուտ է, այս երկու հանգամանքի մէջ կրօնափոխը թէ կրօնափոխ է և թէ ազգափոխ, այս տարբերութեամբ, որ առաջին տեսակ կրօնափոխութիւնը, եթէ չունի մարմնոյ օգուտ, գէթ հոգու օգուտն ունի, իսկ երկրորդ տեսակն, ուղղութիւնից դէպի անուղիղ դիմելն, բոլորովին յիմարութիւն է, կորուստ է հոգու և ինքս ազգի։ Ուրիշ օրինակ ևս, երբ մի հարազատ որդի թողու, ուրանայ իւր առաքինի ծնողը, սիրէ մի ուրիշ առաքինի անձն իբրև իւր ծնող, հայրանենդ է նա, բայց ոչ մոլի, եթէ հարազատ ծնողն մոլի է, որդին թողու զայն և մի առաքինի անձն իւր ծնող ընդունի, թէպէտ գործն հայրամոռութիւն է, բայց առաքինութիւն է, իսկ եթէ թողու առաքինի ծնողը, և զմոլին ընդունի իբրև ծնող, ապերախտութիւն է, մոլութիւն է և յիմարութիւն. ահա կրօնափոխութեան պատկերը։ Բոլորովին տարբեր և ուրիշ պատկեր ու երևոյթ է, երբ մի ազգի իշխանութիւն մի յանկարծակի յեղափոխութեամբ ազգովին դիմէ դէպի մի նոր կրօն, թողու հինը, իւր լեզուից, դպրութիւնից կամ ազգից ոչինչ չէ կորցնում, եթէ ունենայ նոր կրօնի հետ իւր ազգային սովորութիւնը մի տարբեր ծէս և արարողութիւն կրօնի և լեզուն. ինչպէս Հայերը երկու անգամ ազգովին կրօնափոխութեամբ չվնասեցին ազգի գոյութեանը, դառնալով Աստուածպաշտութիւնից դէպի կռապաշտութիւն և կրկին կռապաշտութիւնից դէպի Քրիստոնէութիւն։ Որոյ համար և Քրիստոնէութիւնն ունի զանազան ճիւղեր, ըստ թուոյ ազգութեան, տարբեր ծէս և արարողութիւն կրօնի ըստ բնաւորութեան ազգաց։ Առաքեալներն ևս երբ փուեցան աշխարհ, քարոզեցին քրիստոնէական հաւատն, ազգաց սովորութեան համաձայն ծէսեր և աւանդութիւններ սահմանեցին։ Մինչ Պետրոս ներում էր Հրէայ հաւատացեալների թլպատութեանը և մկրտում էր, բայց Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները Հայաստանի մէջ բնաւ թլպատութեան վերայ չխօսեցին, որովհետև Հայերը չունէին թլպատութեան սովորութիւն, նոյնպէս և միւս առաքեալները հեթանոսաց մէջ, նոցա հետևեցան և իւրեանց յաջորդներն, ինչ ազգի մէջ քա-

րոզեցին զՔրիստոս, նոյն ազգի սովորութեան համաձայն ծէսեր և աւանդութիւններ կարգեցին, մինչև անգամ կռապաշտութեան այն սովորութիւններն, որ քրիստոնէական հաւատոյ դէմ չէին, անփոփոխ թողին։ Ազգափոխութիւնը նոցա նպատակից շատ հեռու էր, նոքա քարոզում էին «մի հօտ և մի հովիւ» բարոյական մտօք, ոյսինքն բոլոր մարդիկ իբրև մի հօտ հետևիլ մի Հովիւ Յիսուսի։ Բայց դարերից յետոյ, ազգասէրներն սկսեցին քարոզել բառի բուն նշանակութեամբ «մի հօտ մի հովիւ» ազգուրացութիւն, մի ազգ, մի հօտ, մի տէրութիւն, մի թագաւոր, մի օրէնք, մի ծէս, մի արարողութիւն, երկնքում մի արեգակն, երկրում մի թագաւոր։ Եւ այս նպատակաւ ամէն հզօր ազգ ցանկացան և ցանկանում են ստուգացնել իւրեանց ազգի թիւը կրօնի պատրուակաւ, տարբեր կարծիք ունեցողներին դառն տանջանաց մատնելով, իսկ նկուն ազգերը պաշտպանեցին և պաշտպանում են իւրեանց ազգի ամրողջութիւնը կրօնափոխութեան քարոզողներից, որոնք կրօնի պատրուակաւ մարդիկ են որսում կամ գողանում, յափշտակում։ Ծագեցան ազգային պատերազմներ կրօնի վարագուրի կամ դիմակի տակ։ Ուստի, ամէն դաշնակցութեան և հաշտարարութեան մէջ դրին և պիտի դնեն «կրօնական ազատութիւն» իբրև առաջին պայման, որ սիրելի է յաղթողին և յաղթեալին։ Վասն զի հզօր ու յաղթող ազգն այս կրօնական ազատութեան պայմանն ընդունում է այն նպատակով, որ ազատութեամբ քարոզէ և որսայ տկար ազգաց դէպի իւր կրօնն ու ազգութիւնը. իսկ տկար ազգն ևս ընդունում է կրօնական ազատութիւնն իբրև վահան, այնու պաշտպանել իւր ազգի ամբողջութիւնը և չթողուլ օտարին մուտ գործել իւր ազգի և եկեղեցու ինքնօրէնութեան մէջ, բռնի որսալ կամ յափշտակել իւր անդամները, խորթացնել իրանից և միացնել օտարի հետ։ Այսպէս ահա այս կրօնական ազատութեան պայմանը միշտ կրկնուել է և պիտի կրկնուի յաղթողի և յաղթեալի բարեկամական դաշնագրի մէջ, իւրաքանչիւր ազգն իւր օգուտը միայն խորհելով։ Ուրեմն մեք Հայերս էլ պարտաւոր ենք առաջարկել այս պայմանն ամէն յաղթողներն, մտաբերելով մեր օգուտը, եթէ ցանկանում ենք ապագայ ունենալ, և շարունակել մեր ազգի գոյութիւնը, որքան ժամանակ արեգակն և լուսին շարունակեն իւրեանց շրջանները։ Պէտք է հե-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴ

տեսել Հրէից ազգին, որ իւրեանց ազգի գոյութիւնը պահպանել են մինչև ցայժմ, միայն պինա պահելով իւրեանց կրօնը, որք թէև վաղուց ընկած են քաղաքական իշխանութիւնից և ցրուած են աշխարհի մէջ, զրկուած հայրենիքից, ատելի եղած են քրիստոնէից, բայց իրրև ազգ պարտաւոր էին պահել իւրեանց կրօնն, իրրև կապ միութեան տգզի, նոցա թշուառութեան պատճառն ուրիշ բան չէ, այլ միայն իւրեանց ճշմարիտ կրօնի դէմ մեղանչելը, և զանազան աղանդների բաժանուիլն է, չլսելով Մովսիսին և մարգարէից, չճանաչելով իւրեանց Փրկիչ Յիսուսին, որ ոչ թէ կրօնափոխութիւն էր քարոզում, այլ մի և նոյն ճշմարիտ կրօնն էր հաստատում, ստուերն իրականի փոխելով և աղանդներ լուծելով։

Վարդան.

Վարդան սպարապետ, արդարև Սահակայ արիւնն ես կրում, նորա երկարախօսութեան աշակերտութեամբդ. դուցէ երևակայեցիր որ եկեղեցու մէջ տղէտ ամբոխի ես քարոզում, բայց ես քո այդչափ երկար ճառախօսութեանը միայն այսչափ եմ պատասխանում, թէ, դու քաղաքագիտութեան արհեստին բնաւ մի մագի չափ տեղեակ չես, դու միայն սովորել ես վանական անգործ վարդապետի երկարաբանութիւնը, որ թմրեցնում է ունկնդրաց և չի թողում մի բան հասկանալ։ Ճշմարիտն ասեմ, ես ձանձրացած քնել էի, երբ դու ընկած սար ու ձոր զանազան ցեղեր էիր համարում, Եռաթելոց պաշտօններ որոշում, թագաւորներ հաշտեցնում և հաշտարարի պայմաններ գրում դատարկ բառերով և անշահ փաստերով, բայց պէտք էիր սովորել փոքր ինչ քաղաքագիտութիւն, որ պահանջում է կրօնը ծածուկ հոգու և սրտի մէջ պահել, մտքով և հոգով պաշտել, իսկ հեթանոսաց առաջ ցոյց տալ և ասել թէ «ամենայն տեսակ կրօն կարելի է ճշմարիտ և ուղիղ ճանաչել, երբ աշխարհի յաղթողներն ընդունել են և հրամայում են հպատակաց ընդունել զայն»։ Եթէ մեր կրօնապետները փոքր ինչ քաղաքագէտ լինէին, ամեն տեղ՝ ուր շինում էին քրիստոնէից համար եկեղեցի, նորա մօտ կշինէին նաև մի մեհեան կամ ատրուշան հեթանոսաց համար. երբ մեք օտարներից պահանջում եմք կրօնական ազատութիւն, ուրեմն պարտաւոր եմք թողուլ Հայաստանի մէջ ատրուշաններ շինել հեթանոսաց համար, և ամեն մարդոյ ազատ կամաց թողուլ, որ ինչ կամի՝ այն պաշտէ։

Վարդան.

Տէր մարգպան, ներեցէք ինձ ասել, որ երբ դու իմ ընդդիմախօսելու ժամանակը թոյլ ես տալի քեզ ննջել, չես աշխատում իւրաքանչիւր փաստերիս դէմ օրինաւոր փաստ գտնել ու խօսել, համոզել կամ համոզուել, ուրեմն աւելորդ է մեր վիճաբանութիւնն և անիմաստակ, յատառութեամբ սուտն իրրև ճշմարիտ ընդունողին ոչինչ չէ օգնում համոզելու։

Վասակ.

Խօսիր, բայց կարճ և հզօր փաստերով համոզիր ինձ կամ դու ինքդ անշուշտ համոզուիր ինձ առանց յամառութեան։

Վարդան.

Երբ դու չկամիս համոզուել, և չկամիս լսել իսկ, ուրեմն աւելի լաւն այն է՝ որ դու ինքդ առանձին խօսիր, առանց ուշադրութեամբ քննելու խօսքերդ, արդարացուր զաղափարդ և հաստատիր սխալ համոզմունքդ, էլ մի աշխատիր ինձ և ազգի ամբողջութիւնը համոզելու քո սխալ և ազգակործան զաղափարիդ։ Ասացիր թէ «մեք հայերս պարտաւոր եմք տալ կրօնի ազատութիւն, շինելով Հայաստանի մէջ մեհեաններ», բայց ո՞ւմ համար, Հայք ինչ պարտաւոր են այլոց համար մեհեաններ շինել. հեթանոսներն առանց մեր արգելքի կամ ընդդիմութեան շինել են իւրեանց համար մեհեաններ Հայաստանի մէջ, ուր որ բնակում են։ Մի՞թէ քրիստոնէական կրօնը մեր հեղինակութիւնն է կամ մեր քաղաքական կանոնադրութիւնն է, որ ըստ պահանջման ժամանակի վերաքննուի և ուզած ձևի մանէ, ոչ, նա անփոփոխելի, անձեռնմխելի սահմանադրութիւն է, Յիսուսի արեամբ գրած և ընդունողի մրտաց, սրտի և հոգու մէջ տպաւորած է։ Մի՞թէ կարելի է երկու տէրանց ծառայել յարգելով հաւասարապէս. մի՞թէ կարելի է լեռան վրայ շինած քաղաքը ծածկել կամ վառած ճրագն ամանի տակ դնել։ Մեք օտար ազգերից ինչ չափով և սահմանով պահանջում եմք կրօնի ազատութիւն, նոյն չափով և տալիս եմք այլոց, ոչ մեք ձեռնամուխ կլինինք նոցա կրօնական գործերին, և ոչ

նոքա էլ մեր գործին, մեք բնաւ բռնութեամբ չեմք արգելում այլակրօնութիւնը, միայն պահպանում ենք մերը, նոքա էլ իրաւունք ունին պահպանել իւրեանց կրօնն, իբրև ազգային սեպհականութիւն։ Միմեանց վերայ բռնանալը խղճի ազատութեան դէմ է, իսկ քարոզել և յորդորել բնական է, ամեն անհատ և ամեն ազգ աշխատում իւր համոզմունքն ընդհանրացնել։ Քրիստոսի առաքեալներն առանց բռնութեան քարոզեցին և տարածեցին քրիստոնէական հաւատը. մեք ևս մեր հաւատոյ ճշմարտութիւնն ամենայն տեղ քարոզելու պարտաւոր ենք, և պաշտպանելու համար մեր արիւնը թափելու ենք։ Պարսիկն ազատ է քարոզել իւր կրօնը Հայաստանի մէջ, բայց ոչ բնաւ զինու զօրութեամբ կամ փողով կամ փառաց և պատուոյ խոստմունքով կամ խարդախ վաճառականի նման զանազան ստերով, խաբեբայ խոստումներով և փոխարինով, այլ միայն պարզ խօսքով գովել իւրը և ցոյց տալ ճշմարտութիւնը։ Ամեն ազգի քարոզիչներն այս արդար օրէնքով և ազատ խղճով պէտք է ընթանան, իսկ երբ մի և նոյն ազգի մէջ դուրս գան ապստամբներ, կրօնի հակառակ գործողներ, մոլորեցուցիչ աղանդաւորներ կամ այլակրօն ազգաց գործիքներ, այն ժամանակ ազգի պարտքն է խրատել, սաստել, հալածել և պատժել իբրև ազգութեան և կրօնի թշնամի համարելով նորանց, և խստիւ զգուշացնել միամտաց և ռամկաց չհետևիլ մոլիներին և դիմակաւորներին, ճշմարիտ հօր պաշտօն վարելով, անխնայահաս մանուկին արգիլել վնասակար ընկերներից և գործերից։

Վ. ՊՈՍԱԿ.

Ուրեմն, ես չեմ սխալում համոզմանս մէջ, որ դու նպատակ ունիս թողուլ սպարապետութեան պաշտօնդ, և վարդապետ դառնալ, դնալ աշխարհ քարոզել։ Այդ որոշումդ քո կամացդ է յանձնած, բայց մի աշխատիր բռնանալ խղճիս վերայ, կրօնական խիստ դասախօսութեամբդ։ Դու ամբողջ կեանքդ վանքերի մէջ ատուտաածաբանական խնդիրների վիճաբանութեամբ ես անցկացրել, Սահակ Հայրապետի խնդրանք ստացել ես սպարապետութեան պաշտօնդ առանց սովորելու քաղաքագիտութիւն և ռազմագիտութիւն, յօգուտ ազգի և հայրենեաց, ուրեմն երկու տէրանց ծառայել դժուար է, կամ հրաժարիր սպարապետութեան պաշտօնից, կամ

թող այդ վերացական մտքերդ, անօգուտ վարդապետութիւններդ, որ բոլորովին անյարմար են բարձր պաշտօնիդ։ որից կախումն ունի ազգի կեանքն ու ապագայն։ Ամեն պաշտօնեայն իւր կոչմանը պիտի ծառայէ. զօրապետացդ՝ սուր, քաջութիւն և հնարագիտութիւն պէտք է, իսկ կրօնագիտութիւն, քարոզութիւն և դատարկ վիճաբանութիւն վարդապետաց պիտոյ է, որ անգործ կեանքը ձանձրալի չթուի նոցա, ուստեն, խմեն ազգի վաստակն, ու օդային վիճաբանութեամբ միմեանց գլուխ պատառեն։ Դու փոխանակ պաշտօնիդ վերարերեալ գործի վերայ խօսելու, ձեռք ես առել կրօն, որդ վերայ խօսել մեր նպատակից դուրս պիտի լինի, մեր պարտքն է պաշտպանել Հայրենիք, լեզու և ազգ, որ է Հայութիւն։

Վ. ՊՈՍԱԿ.

Քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւն քարոզելն ամեն անհատի պարտքն է, նոյնպէս և պաշտպանութիւնը. որովհետև Հայ եկեղեցին ժողովրդական է, ոչ թէ կղերական՝ Դրբայեցւոց պէս միայն Վ. Լատական ցեղին սեպհականած չէ, այլ ամենայն հաւատացեալն իրաւունք ունի նորա ներքին գործերին ձեռնամուխ լինել։ Կառավարիչ, պաշտօնակատար ընտրուել, ուրեմն և պարտաւոր է պաշտպանել, պարտք և իրաւունք առնչակից են։ Քրիստոնէական կրօնագիտութիւնը իմ պաշտօնիս պատիւ է և փառք, առանց այդ գիտութեան ես կը դառնայի խօսուն մեքենայ։ Դու չես ցանկանում լսել ինձ, որ իբրև պատգամաւոր եկեղեցականաց, նախարարաց և համայն ժողովրդեան՝ քեզ առաջարկեցի Հայրենեաց և ազգի փափագը, կրօնի պաշտպանութիւնը. դու թոյլ տուիր քեզ արհամարհել իմ անձնաւորութիւնս իբրև անքաղաքագէտ հոգևորականի աշակերտ և անարժան սպարապետութեան պաշտօնի, բայց ես չեմ թոյլ տալի ինձ շօշափել ձեր անձնականը կամ մարդպանութեան իշխանութիւն ձեռք բերելու գործադրածդ միջոցները։ Դուցէ թէ ես և թէ դու անարժան ենք մեր պաշտօնին, բայց որ դիպուածն արժանացրել է, յաջողել է, պարտաւոր ենք գործով ցոյց տալ ազգին և ապագային, թէ աշխատել ենք արժանացնել մեր անձը մեր բարձր կոչմանը։ Ուստի խնդրեմ պատասխանիր ինձ, պարզ և բացարձակ կերպով, ի՞նչ է դիտաւորութիւնդ. ահա Յազկերտը մեծ

բարկութեամբ կանչել է մեզ բոլոր նախարարներիս մեր միաբանութեամբ զրած պատասխանի համար, որով հերքեցինք նորա կրօնափոխութեան առաջարկութիւնը, որով մեք բացարձակ յայտնեցինք թէ, պատրաստ ենք զալ պարսից դուռը Ենոյն պատասխանը տալ։ Երեկ եկեղեցականաց և աշխարհականաց խառն ժողով գումարեցաւ։ Բաւական միջոց սպասեցին քո զալստեան, և յետոյ միաբան վճռեցին մինչ ի մահ հաստատ մնալ քրիստոնէական ուխտի մէջ, կրկին երդուեցին Աւետարանի վերայ. նոյն ժողովը զիս իբրև պատգամաւոր ուղարկեց քեզ մօտ լսել որոշումդ. ի՞նչ էք պատասխանում, պատրաստուենք զնալ Յազկերտի մօտ մի և նոյն խօսքը կրկնել՝ զոր զրել ենք նորան. թէ ընդդիմանամք, պատերազմի նախապատրաստութիւն տեսնենք ու պաշտպանենք մեր կրօնը, ազգն ու հայրենիքը, Յազկերտի յարձակման դէմ։

Վ. ՊԱՍԱԿ.

Այդ վերջին խօսքը, զուք առաջ կարող էիր ասել և զուր վճռութեամբ ժամանակ չկորցնել։ Դէպ զուք թէ նպատակդ էր զիս ևս համոզել ձեր անհեռատես ազգակործան զործին մասնակցելու. մի՞թէ չկարացիր իմանալ դիտաւորութիւնս, երբ չընդունեցի ժողովի խորհրդին զալու հրաւիրագիրը, մի՞թէ այսչափ երկար բարակ ընդդիմախօսութիւնիցս պարզապէս չմնացար նպատակս, որ ես կամաւ ազգի և հայրենեաց կործանման պատճառ չեմ լինում, ես արդէն շատ եմ զղջացել առաջին ժողովի մէջ ձեր հետ միաբանելուս վերայ, ես չեմ ցանկանում ապագայի ստուերական յուսով ներկայումս իբրև յանդուգն, անխոհեմ և միանգամայն հայրենեաց կործանիչ լինել։ Յազկերտ մեզ կանչել է, մեք իբրև երդուեալ պաշտօնեայ հպատակներ, պարտաւոր ենք անշուշտ զնալ առանց յապաղելու, հաստատ ապացոյցներով, վկաներով և երդմամբ հաստատել թէ մեք խաբեցանք մեր կրօնամոլ եկեղեցականաց խրատին, խստութեամբ պատասխանեցինք արքայի մարդասէր յորդորական հրովարտակին, ներողութիւն խնդրենք մեծ ընծայիւք, միջնորդներով կրկին արքայի սիրոյն արժանանանք, յանձն առնելով նորա կրօնափոխութեան առաջարկութիւնը Հայրենեաց և ազգի պաշտպանութեան համար, իսկ եկեղեցական դասը թող ինքը խորհի իւր

անելիքը, այլ է ազգութիւն, այլ է կրօն. խղճի ազատութեամբ կարելի է ընդունել ամեն տեսակ կրօն իբրև սուրբ։ Ես իմ երիտասարդական օրից քաջ համոզուել եմ, որ կարող եմք զանազան տեսակ կրօնների բաժանուել առանց վնասելոյ ազգութեան. իբրև ազատամիտ Հայ ազատ մնալու եմք կրօնի բռնութիւնից. Հայերը կարող են իւրեանց թուոյ չափով ազանդներ ունենալ և ազգի զոյութեան չը վնասել, բաւական է որ Հայ անունը կրեն, ինչ որ կամին այն պաշտեն։ Մեր կրօնականներն ևս եթէ ինձ լսեն, պէաք է խոնարհին ժամանակի պահանջին, լենին մոգպետ, ատրուշանապետ, այն պաշտօնով ծառայեն ազգին, ինչպէս Տրդատի օրով հայ քրմերը զարձան քրիստոնէական կրօնի քահանայ, ծառայեցին ազգին։ Նոքա իւրեանց հանդիստ ապրուստի համար պաշտպանում են կրօնը, ինչպէս մեք մեր փառքի և պատուի համար պաշտպանում եմք ազգը։ Ահա իմ վերջին նպատակը, էմ պարզ խոսովանո-ՆԻ-նը։ Թէ համաձայնէք ինձ, հայրենեաց և ազգի պաշտպան ու փրկիչ պիտի լինիք, թէ յամառիք, որոշուէք և ազգի մէջ երկպառակութիւն և ներքին շփոթութիւն յարուցանէք, զուք էք պատասխանատու պատմութեան և ապագային։ Ես իմ ձեռքից եկածը պիտի չխնայեմ նպատակս յառաջ տանելու, թէ չյաջողիմ իսկ, իմ խիղճս արդարացնում է ինձ. մարդոյ խիղճն է դատաւոր իւր զործերի, զժոխք կամ արքայութիւնն է պատմութիւնը և ապագայն. ով չէ վախենում խղճից, պատմութիւնից և ապագայից, նա կարող է զործել ամեն տեսակ չարիք. կրօն, ազգ և հայրենիք այնպիսի մարդոյ ձեռքում տղայական խաղալիք են կամ իրան և այլոց վնասելոյ զործիք։ Ահա ես պատրաստուում եմ փութով արքայի մօտ զնալ, ապագայն թող դատէ մեզ ճշմարիտ պատմութեան վկայութեամբ։

Վ. ԱՐԴԱՆ.

Տէր մարդպան, մասնաւորը յաճախ սխալուում է, իսկ ընդհանուրը ոչ բնաւ. ազգի ընդհանրութիւնը վճռել է պաշտպանել քրիստոնէական կրօնը, Յազկերտի առաջարկութեանը ընդդիմադրելով. մասնաւորը պարտաւոր է համաձայնել ամբողջին, թէ չէ կամենում բաժանել, կուսակիցներ որոնել և երկպառակութեան հիմնադիր և հեղինակ դառնալ։ Մեք արդէն միաբան հաւանու-

թեամբ զրեցինք Յաղկերտի հրովարտակի պատասխանը, հերքելով նորա առաջարկութիւնը. ուխտեցինք երդումով, որ մեր արիւնը չխնայենք կրօնի և ազգի պաշտպանութեան նուիրելու. թէ Յաղկերտի զրած պատասխանի և թէ Ս. Վահան Արեւելեանի վերայ երդմնազրի առաջին կնիքը քոյ է, մի՞թէ դու կներես քեզ ուխտազրուժ և երդմնազանց լինել, թէ ազգի ներկայի և ապագայի թշուառութեան պատճառ լինել, թէ քո յիշատակը նզովելու տեղի տալ եսականութեամբ։ Երբ դու ուխտազրուժ կլինիս քո ազգին և Հայրենեաց, մի՞թէ օտարը կվստահի այնուհետեւ քո որ և իցէ խօսքին կամ երդմանը. էլ չես կարող համակրութիւն գտնել ոչ քո ազգի և ոչ օտարի մօտ. մէկ կողմ դնելով Հայրենեաց օգուտը, քո անձնական շահդ մոռծիր գոնէ և միացիր. մէք այո՝ երդուել եմք հաւատարիմ մնալ Յաղկերտին, բայց մեր դաշնագրի մէջ յիշուած է «կրօնի ազատութիւն», երբ Յաղկերտը մեղանչումէ իւր խոստման և դաշանց դէմ, մեր արածն ապստամբութիւն և անհաւատարմութիւն չի համարուում, այլ օրինաւորութիւն, արդէն Յաղկերտն ինքը քանդել և լուծել է դաշնագիրը։ Թէ Պարսից բազմութիւնն է քեզ վախեցնում, յիշէ մեր միութիւնը, որ հրաշքներ կարէ զործել, յիշէ Պարսից երկրի մէջ ծագած երկպառակութիւնը և չորս կողմից սահմանակից տէրութիւնների և ճնշուած ազգերի պատերազմական պատրաստութիւնը, որ ամեն յաջողութիւնծաղր կանէ։ Աղուանից, Վրաց, Լփնաց, Օրդեից, Նորդուաց, Աղձնեաց, Հոնաց ազգերը մի փոքր առիթ են որոնում ապստամբելու. երբ լսեն մեր միանալը, բոլորը կհամաձայնեն մեզ հետ։ Յաղկերտի գահը մերձ է զլորելու, նորա ժառանգներն ու նախարարներն իսկ ժամ յառաջ սպասում են նորա կործանմանը։ Այս հանգամանքները քաղաքագէտի հեռատես աչքից չեն կարող ծածկուիլ. եթէ կրօնի համար էլ հարկաւոր չլինի ընդդիմանալ, զէթ ազգային անկախութեան համար աշխատելու ճիշդ ժամանակն է. դու քո սրտի և հոգու մէջ կամիս այն պաշտիր, բայց զէթ արտաքին ձևով մեր միութիւնից մի բաժանուիր, ժողովրդի երկպառակութեան պատճառ մի լինի. շատ բան կայ որ զիտել արժան է, բայց քարոզել անարժան է և վնասակար. «ժամանակի պահանջին խառնարհելու է», այս քո զաղափարդ է. ահա ժամանակի պահանջին հնազանդելու միջոցն է. ով

չէ աշխատում ներկայի յաջողութիւնից օգուտ քաղել, ապագայի վայն ու հառաչանքն է նորա բաժինը։ Դու արդէն համոզուել եմ՝ որ դու կամաւ չես ցանկանում միանալ մեզ հետ, բայց զէթ արտաքին ձևով այնպէս ցոյց տուր, որ արտաքին թշնամին մեր միութիւնից երկնչի։ Եթէ Յաղկերտը զիտենար՝ որ մեր մէջ երկպառակութիւն կար, փոխանակ յորդորանքի հրովարտակով առաջարկելու մեզ կրօնափոխութիւնը, սաստիկ հրամանով և բռնութեամբ պիտի պահանջէր, Հայոց միութիւնը նորան շատ անհանդիստ է անում։ Մեր ազգի շահն այժմ պահանջումէ կրօնն ու ազգութիւնը միութեան մէջ պահել։ Մեր հոգևորականները հանդիստ կեանք վարելու նպատակով չեն պաշտպանում կրօնը, նոքա մշակ են, հովիւն ազգի, մշակութիւնն ու հովութիւնը ամեն արհեստներից դժուար է, թէպէտ կան բացառութիւններ, ոմանք անձնարաժ են և վարձկան, ինչպէս մեզանում ևս կան միայն անձնական փառքի, պատուի և վայելչութեան համար իշխանաւոր պաշտօնակալներ, որոց պաշտօնը հայրենեաց վնաս է, և հարստահարութիւն։

Վասակ.

Վարդան սպարապետ, դու զուր ես աշխատում համոզել ինձ համաձայնել ձեր ազգակործան խորհրդին, մի՞թէ ես մանուկ եմ, մի՞թէ ազէա և անխելահաս եմ, ներկայումս իմ խիղճս արդար է և հաշտ. ապագայն ու պատմութիւնը ցոյց կտան աշխարհին ձեր յիմարութիւնը և իմ խոհականութիւնը. գնա, պատմիր ժողովին, թէ «Վասակ մինչեռ է Վասակ, չի թողուր իւր նպատակ»։

Վարդան.

Այո՛, մեր խիղճը, ներկայն, ապագայն, և պատմութիւնն ամեն բոպէ պիտի գատեն մեր նպատակն ու գործը, գնամ ահա խորհել և գործել որոց հետ որ ուխտել եմ երդմամբ պաշտպանել մեր կրօնն, ազգն ու Հայրենիքը։

(Երգում)

Առաջին Հայկայ նա է զաւակ,
Մեր սուրբ կրօնին նա է հպատակ,
Որ զանձն զոհ տայ իւր ազգին,
Նորա լեզին և կրօնին։

Կեցցէ կրօն մեր լուսատու.
Կեցցէ Ելթոռն Երարատու.
Մեռցին կրօնի ուրացողներ,
Հայոց ազգի անարգ ցեցկը։
Կեցցեն պաշտպանք Հայ կրօնին.
Մեռցին նենգողք Հայոց ազգին,
Կեցցէ սուրբ սէր և միութիւն,
Կեցցէ Կրօն և Հայ լեզուն։
(Մէնոմ-ի են էրէ-էն Լա գործել ըտ նպատակէ է-ըէանց)։

ՁՇՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ ԱՆՄԱՀ ՊԱՏՄԱԶՔ*) ԵՂԻՇԷ, ՂԱԶԱՐ, ԵՒ ԱՊԱԴՈՑՆ։

Վարդան Մամիկոնեան համազասպ Մամիկոնեանի որդին Սահակ պարթև հայրապետի թոռն, մեծանալով Սահակ պարթևի մօտ, ուսաւ Հայ գրագրութիւնը Մեսրովբի (Հայոց գրոց գտիչ) խնամակալութեանը յանձնուած դպրոցի մէջ։ Համազասպը իւր աներ Սահակ պարթևի խնդիրքով և միջնորդութեամբ ստացաւ սպարապետութեան պաշտօն Հայոց Վռամշապուհ թագաւորից, որով Մամիկոնեան ցեղը, որ ստոր էր Հայ նախարարների կարգի մէջ, բարձրացաւ։ Համազասպի սպարապետութեանը յաջորդեց Վարդանը, որ և ստացաւ Յունաց Թէոդոս կայսրից Սարատկատութեան պաշտօն. Սահակայ հետ գնաց Պարսից դուռը Վռամի մօտ, պաշտպանել

(*) Եղիշէ վարդապետ աշակերտ Սահակայ և Մեսրովբայ, առենադպիր Վարդանայ և եպիսկոպոս Ամատունեաց (որ և ներկայ էր Երատաշատու ժողովին, Յաղկերտի և Միհրներսէհի հրովարտակներին պատասխանելու), ականատես վկայ է պատերազմի բոլոր հանգամանքներին, և Մամիկոնեան Դաւիթ քահանայի խնդիրքով գրեց Վարդանանց լիակատար պատմութիւնը։ Իսկ Ղազար Փարպեցին, աշակերտ Մեսրովբայ, իւր ուսումը կատարելագործած Աթէնքում, գրեց Հայոց պատմութիւնը Հայաստանի մէջ պատահած անցքերով, կրօնական պատերազմի պատճառաւ, սկսած 388 թուից, մինչ 495 թիւը, մօտ 100 տարուայ պատմութիւններ. սոքա կենդանի ճշմարտախօս վկայ են Վարդանայ և Վասակայ միմեանց հակապատկեր նպատակներին և գործերին, «Արարատ» «Պսակ» և «Փորձ» թող աշխատեն ճշմարտապատում վկայ լինել «Մեղուի» և «Մշակի» հակապատկեր գործերին, որոց հարցին նուիրեցի այս ԸՆԴԷՄԽՕՕՐԻՆԸ, որով պարզել եմ «Հայ կրօնի և Ազգութեան միութեան հարցը», զոր ընդ երկար քրքրեց Հայ մամուլը։

Հայոց Երատաշիր թագաւորին, որին մատնած էին Հայ նախարարները, Սահակայ հետ արդելուեցաւ Պարսկաստանի մէջ և յետոյ նորա հետ աղատուելով ընդհանուր սպարապետութեան պաշտօնով դարձաւ Հայաստան։

Երբ Յաղկերտը կամեցաւ զրադաշտ մոգի աղանդը տարածել Հայաստանի մէջ և բառնալ քրիստոնէութիւնը, Վարդանը իբրև կենդանի օրինակ կանգնեցաւ ազգասէր և կրօնասէր Հայոց պարագլուխ։ Յովսէփ եպիսկոպոսի (Կաթուղիկոսի) հետ միանալով Հայ Կրօնականերին և նախարարներին մեծ ժողով զումարեց Երատաշատ քաղաքում, հերքել Պարսից կրօնափոխութեան առաջարկութիւնը, որով սկիզբն եղաւ այն պատերազմի, որոյ զրոշակի վերայ գրուած էր, «ազգ, կրօն և միութիւն»։

Երբ Յաղկերտը բարկութեամբ իւր մօտ կանչեց Հայ նախարարներին, սաստիկ ընդունել կրակապաշտութիւնը, Վարդանը իբրև թարգման իւր ընկեր նախարարների, հերքեց թագաւորի հրամանն անարկիւղ վստահութեամբ և նախարարների հետ բանտարկուեցաւ, և երբ Յաղկերտի պալատական դաղտնի քրիստոնեայ ներքինուց իմացաւ, որ Յաղկերտը մտադիր է կոտորել նախարարներին և մեծ զօրքով Հայաստան դիմել, քարոզքանդ անել, Վարդան արժան համարեց աշխարհ շահել, իւր անձը տուժել, ներքինու և Հայ նախարարների խորհրդով առ երեսս ուրացաւ քրիստոնէութիւնը, որպէս զի վերադառնալով Հայաստան, ազգի հետ միացած կռուի Յաղկերտի դէմ, երդուելով Աւետարանի վերայ մինչ ի մահ պաշտպանել կրօնն ու ազգը։ Երբ Հայ նախարարների, մոգերի և Պարսից զօրքերի հետ դարձաւ Հայաստան՝ Հայ կրօնականներն ու ժողովուրդը միացած եկան նոցա դէմ կոտորել Հայ ուրացողներին. իսկոյն Վարդան իւր համախոհներով անցաւ հաւատացեալց կողմը, կոտորեցին մոգպաներին և Պարսից զօրքերին։ Միւնեաց իշխան Վասակ մարզպան, որ սրտի մտօք յանձն էր առել զրադէշտի աղանդը, ուրանալով քրիստոնէութիւնը, հաստատեցաց իւր ուրացութեան մէջ, Յաղկերտի ձեռքով Հայոց վերայ թագաւորելու յուսով, մոգերի հետ միաբանած՝ կռուեց Հայոց հետ, բայց երբ զերի բռնուեցաւ, կեղծաւորութեամբ, շողոքորդութեամբ և սուրբ Աւետարանի վերայ երդուելով պաշտպանել քրիստոնէական կրօնն, ազատութիւն ստացաւ։ Նոյն միջոցին Պարսից Սեբուխտ զօրապետը Աղուանից

վերայ դիմեց՝ բռնութեամբ տարածել զրադեշտի աղանդը, բառնալ քրիստոնէութիւնը. նոքա Հայոց օգնութեանը դիմեցին, ուստի Վարդան անմիջապէս մի զօրաբաժնով գնաց օգնութիւն, որ մեծ ջարդ տուեց Պարսից զօրքերին, յաղթեց և վերադարձաւ Հայաստան։

Վարդանայ բացակայութեան ժամանակը, Վասակը կրկին Պարսից կողմն անցնելով՝ շատ աւերմունքներ արեց, շատ եկեղեցիներ մեհեան դարձրեց, կողոպտեց շատ վանքեր, բերդեր, քաղաքներ և գեղեր, կրօնականների և նախարարների ընտանիքներին կոտորեց և ոմանց գերի բռնեց և բերդերի մէջ բանտարկեց. Վարդանը քաջութեամբ զիմեց Վասակայ վերայ, յաղթեց ու փախցրեց Սիւնեաց աշխարհը, ազատեց քահանաների ընտանիքը, կործանեց աղտոտանները և կրկին եկեղեցիները նորոգեց։

Յազկերտը յուսահատուած այս անյաջողութեան վերայ, կամեցաւ թոյլ տալ իւր առաջարկութիւնը, բայց Վասակը իւր խաբեական խօսքերով և շողոքորթութեամբ համոզեց Միհրներսէհ մեծ հաղարապետին, որ առանց զժուարութեան արքայի կամքը պիտի կատարուի, Հայաստանի մէջ տարածելով մոգական աղանդը. նա դաւաւ իւր կուսակից նախարարներ և երկու անարժան, փառամոլ քահանաներ, Պետրոս և Զանդակ, Հայոց մէջ երկպառակութիւն ցանեց ասելով թէ «Յազկերտը կրօնի ազատութիւն է շնորհել, Վարդան զուր է ապստամբել», քանեց շատերի միաբանութիւնը, որ ունէին Հայոց հետ. նամակ գրեց նաև Յունաց բաժնի Հայոց վիճակաւոր Վասակ Մամիկոնեանին, իւր չարութեան զործակից արեց նորան, արդիւնց թէ Յունաց զօրքերի և թէ Յունաց բաժին Հայաստանի Հայոց օգնութիւնը։ Վարդանը ոչ մի տեղից օգնութիւն չգտնելով, յոյսը Աստուծոյ և իւր գնդի միաբանութեան բազկի վրայ դնելով՝ պատրաստեցաւ պատերազմի Պարսից ահաւոր բազմութեան դէմ, որ Վասակի և Մուշկան Սխալաւորի առաջնորդութեամբ յարձակուեցան Հայաստանի վերայ Երասխ գետի եզերքը։ Վարդանը քաջութեամբ սկսեց ճակատամարտը, որոյ մասնակից էին և կրօնականներ, և կանայք անգամ, 60 հազար անձինք, մեծ ջարդ տուեց Պարսից զօրքերին, ուր և ինքն ստացաւ նահատակութեան պսակ, սաստիկ յարձակման մէջ։ Իսկ ազգուրաց Վասակը, որ յոյս ունէր զէթ Հայաստանի աւերակաց վերայ

թագաւորելու, շարունակեց իւր խաբեայ հնարքները, փնտռեց թէ իւր հայրենեաց և թէ Պարսից զօրքերին, որոյ վերայ սաստիկ բարկանալով Յազկերտը, մեծ անարգանքով բանտարկեց նորան, յարքունիս գրաւեց նորա ինչքն ու ստացուածքը, որդիքն ու կանայքը, Վասակը մահապարտից բանտի մէջ որդնոտելով՝ սատակեցաւ առանց զղջման, չարժանացաւ Հայաստանի հողի մէջ թաղուելու, կորաւ ինքն և իւր ունայն յոյսը և ստացաւ ապազայի յաւիտենական նախատինքն ու նզովքը։

Ապագայի վիճակ.

Զիք, չի՛ք, վատաց, չի՛ք յաջողուած,
Յերկնից զոչէ որ Էնն Աստուած։
Կորչին մատնիչք մարզպան Վասակ,
Սուտ քահանայք, Պետրոս, Զանդակ,
Եւ զործակից նոցին Սահակ
Անհետացի անյիշատակ։

Հայապատանի յանդիմանութիւն.

Զորանայ ձեռքն որ միշտ որոմն
Յանէ Հայոց անդաստաններ,
Կուրանայ աչքն այն վատատես,
Որ սպասէ պտուղն քաղել։
Ամօթ, ամօթ ձեր վատ ճակատին,
Որ միշտ սիրէք զբաժանումն,
Բաժանուեցէք դուք իմ մէջից,
Որ նախատինք է՛ք Հայ անուան։
Մի՞այն բանիւ լոկ ազգասէր
Զևանայք դուք, նենգաւորնե՛ր,
Ապականիչ չար աղուեսնե՛ր
Մատնի՛չք ազգի անարգ ցեցե՛ր։
Զի՛ք, չի՛ք, վատաց, չի՛ք յաջողուած
Յերկնից զոչէ որ Էնն Աստուած։

Եկեղեցոյ պսակ.

Նորահրաշ պսակաւոր և զօրազլուխ առաքինեաց, վառեցար զենու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու, Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին, վարդագոյն արեամբդ քով, պսակեցեր զեկեղեցին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0418191

ՏՊՈՒԱԾ ԵՆ

1, Համառօտ Քերականութիւն։

2, Քրիստոնէական վարդապետութիւն ընդարձակ, հանդերձ վկայութեամբք Ս. Գրոց։ Գին է 1 ռուբլի։ 20 կոպէկ։

3, Ընդդիմախօսութիւն Ս. Վարդանայ ընդ Վասակայ։ Գին է 30 կոպէկ։

4, Ողբերգութիւն Ս. Վարդանանց զօրավարաց։ Գին է 60 կոպէկ։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

1, Հայոց Վարդեր եւ Փշեր, այսինքն իսկզբանէ անտի Հայ ազգութեան կամ եկեղեցւոյ պաշտպանող եւ վնասող երեւելի Հայոց կենսագրութիւն եւ ապազայի տուած վ-ըդ-է կամ ֆշէ պսակներ։

2, Համառօտ Քրիս. վարդապետութիւն, Դասագիրք լինելու յարմարութեամբ։

3, Հրահանգ ուսման Հայոց լեզուի, նոր ոճով։

4, Ողբերգութիւն Սրբոց Ղէոնդեանց, 3 գործողութեամբ։

5, Ողբերգութիւն կամ եղերելի վախճան ուրացող Վասակայ, 5 գործողութեամբ։

6, Ողբերգութիւն Աբելի, 3 գործողութեամբ։

7, Ողբերգութիւն Յովսեփայ դեղեցկի եւ Փառաւորութիւնն, 5 գործողութեամբ։

8, Կատակերգութիւն Սաւրի գիւղացի խաչագողների, 3 գործողութեամբ։

9, Կատակերգութիւն իմաստակ Վարժապետի, սուտ Բժշկի եւ Ագահի կամ Հրաշափառ խայտառակութիւն, 1 գործողութեամբ։

10, Կատակերգութիւն Փաստաբանի, 3 գործողութեամբ։

11, Կատակերգութիւն բանտապետի, 2 գործողութեամբ։

12, Աղիւսակ 25 ամաց Օրացուցի։

Մեր Հասցէն է Վ-աղ-բ-ատ-ոտ Ս. Գնա-նի։